
II

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ.
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

ՄԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծննդավայրը: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի ամենաակնառու անդամ Մանուկ Խաչատուրի Աբեղյանը ծնվել է 1865-ի մարտի 17-ին, (հին տոմարով 5-ին), Նախիջևանի Աստապատ գյուղի մոտ գտնվող Թազաքենդ գյուղում,



որը ժողովրդի կողմից շարունակվում էր կոչվել կողքի ավերված գյուղի անունով՝ Աստապատ: Աստապատում էր գտնվում նաև սուրբ Ստեփանոսի վանքը, որն իր կարմիր տուֆից և աղյուսից կառուցված լինելու պատճառով, կոչվել է նաև Կարմիր վանք:

Աբեղյանը հայրենի գյուղում: Աբեղյանի 7 տարին լրանալու կապակցությամբ հայրը որդու թախանձանքով նրա համար գնում է մի այբբենարան: Աբեղյանն սկսում է սովորել այդ այբբենարանով, միաժամանակ գրաձանաչության դասեր առնել գյուղի խալֆաներից (=գրագիր) և խորամուխ լինում գրաբար գրքերի ընթերցանության մեջ: Այդ տարիներին Հովակիմ Եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը (Էմին Տեր-Գրիգորյանի հայրը) հիմնում է Կարմիր վանքի դպրոցը, որի անդրանիկ սաներից է դառնում Մ. Աբեղյանը: Այստեղ սովորում է հինգ-վեց ամիս՝ սկզբից նեթ ցուցաբերելով բացառիկ ընդունակություններ, որի պատճառով մի երջանիկ պատահականությամբ նա դառնում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աշակերտ¹:

Նորաբաց Գևորգյան ճեմարանի սանը: Մ. Աբեղյանը 1876 թ. ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան և հենց սկզբից իր ընդունակությունների պատճառով արժանանում է ճեմարանի տեսուչ Գաբրիել եպս. Այվազովսկու սիրուն և համակրանքին: 1882 թ. Աբեղյանը բարձր

¹ Տե՛ս Մ. Հ ա թ ու թ յ ու ն յ ա ն. Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը, Երևան, 1970, էջ 19:

գնահատականներով ավարտում է ճեմարանի դպրոցական հանրակրթական բաժինը և փոխադրվում է լսարանական մասնագիտական բաժին: 1885 թ. բոլոր քննությունները հանձնում է «յոժ գովելի» գնահատականներով, ավարտելով ճեմարանի նաև լսարանական բաժինը՝ արժանանալով առաջնակարգ մրցանակագրի (դիպլոմ):

Աբեղյանը Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչ: 1887-ին թողնելով ճեմարանը, Աբեղյանը հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է կարգվում Շուշվա թեմական դպրոցում և աշխատում է ընդամենը երկու տարի, մի կարճ ժամանակամիջոց, որը, սակայն, նրա կյանքում նշանավորվում է երկու կարևոր փաստով: Այստեղ նա դպրոցի մի քանի ուսուցիչներից կազմում է գրական մի շրջան: Այդ խմբակի անդամները գրական տարբեր խնդիրների շուրջ հանդես են գալիս դասախոսություններով և մտքերի փոխանակությամբ: Այստեղ է, որ 1888-ին Աբեղյանը, նախ ունկնդիրների փոքր շրջանում, ապա առավել լայն հասարակության առջև առաջին անգամ կարդում է մեր ժողովրդական վեպի՝ «Մասնա ծոեր»-ի իր գրառած նոր պատումը՝ հիացմունք պատճառելով հանդիսականներին: 1888-ին Շուշիում լույս է տեսնում «Նմուշներ» բանաստեղծական ժողովածուն, որն իր գրական-հասարակական արձագանքներով Աբեղյանին համոզում է վերջնականապես ձեռք քաշել բանաստեղծություններ հորինելուց. և ապա հաջորդ տարի (1889 թ.) Շուշիում լույս տեսած «Դավիթ և Մհերն» էր՝ հայ ժողովրդական վեպի երկրորդ նշանավոր պատումը, որ մինչև այդ գիտությանը հայտնի Գարեգին Սրվանձտյանի առաջին ու միակ պատումից հետո, գալիս էր հաստատելու, որ հայ ժողովրդական նորահայտ վեպը ոչ թե պատահական կամ տեղական բնույթի մի ստեղծագործություն է, սոսկ Տարոնին հատուկ, այլ մի համազգային վեպ, որ վաղուց է դուրս եկել Մշո կամ Մասնո սահմաններից ու դարձել Հայաստանի այլ գավառների սեփականությունը ևս: «Մասնա ծոեր» վեպի այդ նոր պատումը Աբեղյանը գրի էր առել Գևորգյան ճեմարանում սովորելիս՝ 1886-ին, ճեմարանի դոնապան մոկացի Նահապետից (Նախո քեռի): Վեպի այս նոր պատումն իր գեղարվեստական ու կուլտուր-պատմական ակնհայտ արժանիքներով գրավում է ժամանակի գիտական մտքի ուշադրությունը:

Նույն իսկ տարիում՝ 1889-ին «Մուրճ» ամսագրում լույս է տեսնում Մ. Աբեղյանի անդրանիկ հետազոտությունը՝ «Ազգային վեպ» խորագրով:

Աբեղյանը Թիֆլիսում: 1889-ին Աբեղյանը Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանի տեսուչ, իր երբեմնի ուսուցիչ Փիլիպոս Վարդանյանի հրավերով մեկնում է Թիֆլիս և ստանձնում վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցչի պաշտոնը: Ուսուցչությանը գուրընթաց Աբեղյանը լրագրային-հասարակական գործունեություն է ծա-

վալում՝ իր գրական բախտը կապելով ժամանակի հայ նշանավոր պարբերականներից մեկի՝ «Նոր-դար»-ի հետ: 1889-ից սկսած Աբեղյանը պարբերաբար թղթակցում է «Նոր-դար»-ին, իր բուն ազգանունից բացի, հանդես գալով «Վարսամ», «Գիսավոր» և այլ կեղծանուններով: Նրա սկզբնական շրջանի լրագրային գործունեության առանցքը ժամանակի հայ գրականության, լեզվի և թատրոնի հետ առնչվող հրատապ հարցերն էին, որոնք արծարծում էին նրա մատենախոսական ու թատերախոսական հողվածներում, 1891–1892 թվականներին, Աբեղյանը ստանձնում է «Նոր-դար»-ի խմբագրությունն ու անգամ հրատարակությունը՝ Նար-Ղոսի, երբեմն էլ Մուրացանի օժանդակությամբ:

1889 թվականից սկսած ընտրվում է Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության խմբագրական մասնաժողովի անդամ: Այդ տարիներին նաև կատարում է եվրոպական և ռուս հեղինակներից մի շարք թարգմանություններ, որոնցից հատկապես աչքի է ընկնում Գոգոլի «Տարաս Բուլբան» (1892 թ.):

Ժողովրդի նյութական ու հոգևոր հազարամյա մշակույթի նորովի ու հիմնավոր հետազոտության խնդիրը դառնում էր դարաշրջանի հրամայականը, ինչի համար անհրաժեշտ էր տիրապետել ժամանակի գիտական պահանջները բավարարող գիտելիքների և մեթոդների: Աբեղյանը ևս ձգտում էր եվրոպական բարձրագույն կրթության: Նրան հաջողվում է 1893-ին ուսանելու մեկնել Գերմանիա: Ուսման և ապրուստի ծախքերի հոգսը ստանձնում է Ալ. Մանթաշյանը:

Աբեղյանը եվրոպական համալսարաններում: 1893 թ. Աբեղյանն ընդունվում է Ենայի համալսարանի բանասիրության և փիլիսոփայության ֆակուլտետը կամ բաժինը: Երկու կիսամյակ ուսանում է Ենայում, երեք կիսամյակ՝ Լայպցիգում, երեք էլ՝ Բեռլինի համալսարաններում: Գերմանական համալսարաններում ուսանելու տարիներին (1893–1895 թթ.) Աբեղյանը զբաղվում է հատկապես գերմանական բանասիրությամբ, մասնավորապես՝ պատմության, լեզվի և գրականության ուսումնասիրությամբ: Նա խորամուխ է լինում գերմանական գրականության և փիլիսոփայության մեջ, քաջ տիրապետում գերմաներենին, ծանոթանում գերմաներեն լեզվով ստեղծված եվրոպական ու արևելյան ժողովուրդների վերաբերյալ գիտական հարուստ ու բազմակողմանի գրականությանը:

1895-ին Աբեղյանը Գերմանիայից անցնում է Ֆրանսիա՝ Փարիզ, և մեկ տարի ուսանում Սորբոնի համալսարանի բանասիրության ֆակուլտետում՝ որպես ազատ ունկնդիր: Այստեղ նա ուսումնասիրում է հատկապես գրականություն և գրականության տեսություն. հմտանում է ֆրանսերենին և խորամուխ լինում ֆրանսիական գեղեցիկ գրականության մեջ:

Ֆրանսիայում էլ, ահա, Աբեղյանը գրում է «Գրական դպրոցներ» աշխատությունը, որը Փարիզից մաս առ մաս ուղարկում է Թիֆլիս՝ «Նոր-դար»-ին: «Նոր-դար»-ի 1896-ի 26-րդ համարից սկսում է տպագրվել նշված աշխատությունը:

«Նոր-դար»-ի հետ Աբեղյանը շարունակում է կապ պահպանել նաև Եվրոպայում գտնված տարիներին: Տակավին, նոր ոտք դրած Եվրոպա, նա հանդես է գալիս իբրև «Նոր-դար»-ի հատուկ թղթակից: 1893-ին, երբ կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանն այցելում է Ավստրիա, Աբեղյանը մեկնում է Վիեննա՝ կաթողիկոսի այցը «Նոր-դար»-ի էջերում լուսաբանելու:

1897-ին «Արարատ»-ում Աբեղյանը տպագրում է «Մեր երկու գրական լեզվի միության խնդիրը» ծրագրային հոդվածը: Վերջինս ուղղված էր ժամանակի որոշ մտավորականների մեջ իշխող այն տեսակետի դեմ, թե գրական արևմտահայերենի և արևելահայերենի «միությունն անհրաժեշտ հարկավոր չէ»:

Եվրոպայում ուսանելու տարիներին Աբեղյանը գործուն մասնակցություն է ցուցաբերում նաև տեղի հայ ուսանողության միության աշխատանքներին: Գերմանիայում Աբեղյանը հատկապես հմտանում է հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանության և հին հավատալիքների ուսումնասիրության մեջ և այդ հավատալիքների բաղդատությամբ՝ համեմատական հետազոտության է ենթարկում հայ ժողովրդական հավատալիքները:

1898-ին Աբեղյանն ավարտական քննություններ է հանձնում Ենայի համալսարանում, քննության գլխավոր ճյուղը ընտրելով ընդհանուր պատմությունը, իսկ երկրորդական ճյուղ՝ ընդհանուր փիլիսոփայությունը և ֆրանսերեն լեզուն: Այստեղ էլ նա իր «Հայ ժողովրդական հավատալիքը» (“Der armenische Volksglaube”) աշխատությունը ներկայացնում է որպես ավարտական դիսերտացիա: Վերջինս քննվում և բարձր գնահատականի է արժանանում համալսարանի պրոֆեսոր, Աբեղյանի երախտավոր դասախոս, նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Հայնրիխ Գելցերի կողմից: Աբեղյանը գերազանց պաշտպանում է դիսերտացիան և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան: Մեկ տարի հետո՝ 1899-ին, Լայպցիգում, հիշյալ աշխատությունը տպագրվում և գոհունակությամբ է ընդունվում գիտական հասարակության կողմից:

Կրկին Էջմիածնում: 1898-ին, երբ Մ. Աբեղյանը վերադառնում է Թիֆլիս, անմիջապես Գևորգյան ճեմարանի տեսչությունը նրան հրավիրում է ճեմարանում դասախոսելու հայոց լեզու, գրականություն, պատմություն, աշխարհագրություն և գերմաներեն լեզու: Աբեղյանը ընդունում է հրավերը և մեկնում Վաղարշապատ: Ստանձնելով ճեմարանի ուսուցչի պաշտոնը՝ նա սկսում է դասավանդել թե՛ դպրոցական և թե՛ լսարանական բաժիններում:

Մկսվում է Արեղյանի կյանքի ու գիտամանկավարժական գործունեության երկրորդ և ամենաբեղմնավոր ժամանակաշրջանը: Գևորգյան ճեմարանում դասավանդելու շուրջ 16 տարիների ընթացքում առավել հստակվում են նրա նպատակները, վերջնականապես ճշգրտվում գիտական հետազոտությունների նրա նախասիրած բնագավառները: «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» բանավիճային ստվար աշխատությունն ուղղված էր 1896-ին Մոսկվայում հրատարակված Լազարյան ճեմարանի պրոֆ. Գր. Խալաթյանցի «Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского» ծավալուն ուսումնասիրության դեմ: Սա Արեղյանի խոշոր ծառայությունն էր հայագիտությանը: Տարիներ անց, Թիֆլիսում Արեղյանի հիշյալ աշխատությունն արժանանում է Ղուկասյան մրցանակին:

Նույն 1898-ին՝ Գևորգյան ճեմարանի հիմնադրման քսանհինգամյա մշակութային տարեդարձը, Արեղյանը նշանավորում է մի ամփոփ ու բովանդակալից գործով, նվիրված ճեմարանի հիմնադիր Գևորգ IV Դ. - Մեծագործ կաթողիկոսի կյանքին ու եկեղեցա-հասարակական գործունեությանը:

Արեղյանի ու Կոմիտասի համատեղ աշխատանքով 1903-ին լույս է տեսնում «Հազար ու մի խաղ» խորագրով ժողովրդական երգերի առաջին հիսնյակը, 1905-ին՝ երկրորդ հիսնյակը, իսկ երրորդը, որը ևս - պատրաստ էր, Կոմիտասն իր հետ տանում է Կ. Պոլիս հրատարակելու, բայց այդպես էլ մնում է չստպագրված: Մինչև այդ, 1904-ին Արեղյանը հրատարակում է ժողովրդական երգերին նվիրված իր անդրանիկ հետազոտությունը, որը շատ կողմերով նորություն էր հայ բանագիտության համար:

Արեղյանը 1900-ականներին իր գիտական մտքի արդյունքներով աստիճանաբար սկսում է գերիշխող դառնալ հայագիտության մեջ: Այս շրջանում Արեղյանի բանագիտական խոշորագույն հետազոտությունն է դառնում «Հայ ժողովրդական վեպը», որը 1906 թվականից սկսում է շարունակաբար լույս տեսնել «Ազգագրական հանդես»-ում: «Մասնա ծոեր»-ի 15 պատումների հիման վրա Արեղյանը համակողմանի հետազոտում է վեպը՝ մասնավորապես վիպասացների արվեստն ու սոցիալական պատկանելությունը, վեպի տարածման աշխարհագրական միջավայրը, նրա ծագման ու վերջնական ձևավորման ժամանակաշրջանն ու պատմական ատաղձը, առասպելա-դիցաբանական հատկանիշներն ու հին առասպելների և վեպերի հետ ունեցած աղերսը, գաղափարական ու սոցիալ-կենցաղային բովանդակությունը և արվեստի մի քանի հարցեր՝ ստեղծելով մի կուռ ու ամբողջական ուսմունք հայ ժողովրդական վեպի մասին:

1906-ին հրատարակած «Աշխարհաբարի քերականությամբ» Արեղյանը բոլորովին նոր ձևով էր վերաքննում ու վերակարգում հայերենի

լեզվական իրողություններն ու քերականական համակարգը, իսկ «Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.) և «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» (1909 թ.) աշխատություններով նա հայոց լեզվի հոլովական սխտեմը ամբողջապես ազատագրում է օտար ու ավանդական քերականությունների գերությունից, այն բխեցնում հենց հայերենին առանձնահատուկ օրինաչափություններից:

Ահա թե ինչ է գրում Անտուան Մեյեն այս աշխատության մասին. «Արևելահայ գրական լեզվի այս շարահյուսությունը արդի հայերենի քերականության մասին գրված լավագույն աշխատությունն է»: «Այն իսկապես գիտական գործ է, որ պետք է ուսումնասիրեն բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում են այսօրվա հայերենով»²:

1913-ին Էջմիածնում՝ հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված համագգային հորեյանական մեծ հանդեսում, Աբեղյանը կարդում է հայոց լեզվի ուղղագրական բարեփոխումների գլխավոր խնդիրները շոշափող պատմական դասախոսությունը, որն իր հիմնավոր ու համարձակ սկզբունքներով հիմք դարձավ մեր ուղղագրության ապագա բարեփոխությանը:

Ճեմարանում, հայոց լեզվի դասավանդմանը զուգընթաց, նա մշակում է առարկայի դասավանդման իր մեթոդներն ու ծրագրերը, որոնց հիման վրա կազմում է գրաբարի ու աշխարհաբարի դասագիրք:

1907-ին Աբեղյանը կազմում է իր մեծարժեք «Գրաբարի համառոտ քերականություն»-ը, որի հիմքի վրա 1915–16 թվականներին Թիֆլիսում հրատարակում է «Գրաբարի դասագրքի» առաջին և երկրորդ պրակները: 1912-ից ի վեր, Ներսիսյան դպրոցի ուսուցիչներ Մ. Մատենձյանի և Ա. Աբեղյանի հետ համատեղ նա կազմում և տպագրության է հանձնում «Գրագետ» խորագրով ուղղագրական ձեռագիր հոդվածների երեք պրակները, որոնք, հաջորդաբար տպագրվելով, հետագայում ունենում են մի քանի վերահրատարակություններ:

Աբեղյանի կազմած հայոց լեզվի դասագրքերն ու ձեռնարկները, իրենց կուռ ու կառուցիկ մեթոդի պատճառով լայնորեն օգտագործվում են ժամանակի հայկական դպրոցներում և մեծ դեր խաղում դարասկզբի արևելահայության մեջ հայերենի ուսուցման գործում:

Հայ գրականությանը նվիրված Աբեղյանի այս շրջանի հետազոտությունները սահմանափակվում են սոսկ գրա-պատմական խնդիրներով: 1908–1909 թվականներին «Արարատ» ամսագրի մի շարք համարներում լույս տեսնող «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից» աշխատությամբ, նա մի կողմից շոշափում է մեր նոր գրականության սկզբնավորման հարցը, մյուս կողմից՝ պատմա-

² Տե՛ս, „Bulletin de la Socie'te' Linguistique de Paris”, № 61 (XVIII, 2) հոկտեմբեր, 1913: Նաև՝ „Jornal Asiatique”, 1913, նոյ.-դեկ., XI սերիա, հ. II, էջ 689–690:

ժամանակագրական միասնական շղթայի մեջ, առանձին հեղինակներով քննում և արժեքավորում է դարասկզբի գրաբար բանաստեղծությունը՝ հասնելով մինչ Հարություն Ալամդարյան: 1912-ին «Ուրվագծեր հայոց գրականության պատմությունից» խորագրի տակ «Արարատ»-ում լույս է տեսնում արնելահայ նոր քնարերգության սկզբնավորող Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված մի ամփոփ ուսումնասիրություն: Նույն թվին «Արարատ»-ում, դարձյալ նույն վերնագրի տակ լույս է տեսնում հայոց հոգևոր բանաստեղծությանը՝ շարականներին, նվիրված մեծարժեք հետազոտությունը («Շարականների մասին»), որն իր տեսակի մեջ եզակի գործ էր:

Սյս հետազոտություններով Աբեղյանը, փաստորեն, ձեռնարկում էր հայ գրականության պատմության շարադրմանը, որը, սակայն, մնում էր սոսկ ուրվագծերի և մի քանի հեղինակի սահմաններում:

1913-ին Թիֆլիսում, «Պատմագիրք հայոց» մատենաշարով, Աբեղյանի և Սեթ Հարությունյանի աշխատասիրությամբ լույս է տեսնում «Սովսես Խորենացու Հայոց պատմության» քննական-բաղդատական բնագիրը. մի տքնաջան ու մեծարդյունք գործ, որի վրա կազմողները աշխատել էին 1901 թվականից ի վեր:

Աբեղյանի ճեմարանական շրջանի գործունեությունը համընկնում է ռուսական առաջին հեղափոխության տարիներին:

1899–1900 ուսումնական տարում Աբեղյանը ստանձնում է նաև ընդհանուր եվրոպական գրականության, իսկ հաջորդ՝ 1900–1901 ուստարում՝ նաև գրականության տեսության դասավանդումը: Ճեմարանի ուսումնական ծրագրում Աբեղյանը մի կարևոր նորամուծություն է կատարում. առաջին անգամ հայկական ուսումնական հաստատությունների պատմության մեջ ներմուծում է ժողովրդական բանահյուսությունն՝ իբրև առանձին ծրագրված առարկա և ինքն էլ ստանձնում դասավանդումը:

«Գիսավորի հիշատակարանը» («Նոր-դար», 1902 թ.) ֆելիտոնաշարի և զանազան պաշտոնական գրությունների մեջ, նա երգիծական որոշակի իրադրությունների ու կերպարների միջոցով բացահայտում է Էջմիածնի վանական միջավայրում տիրող բացասական երևույթները:

1904–1905 ուսումնական տարին դեռևս չավարտված՝ վրա են հասնում ցարական գաղտնի ոստիկանության գիտությամբ ու դրդումներով կազմակերպված հայ-ադրբեջանական ազգամիջյան կոտորածները, որոնք առավել բորբոքում են, առանց այն էլ հուզված աշակերտական մթնոլորտը:

Աբեղյանը 1914-ի հունիսի 15-ին հրաժարվում է ճեմարանում իր ստանձնած տարբեր պաշտոններից (դասախոսություն, ճեմարանի տեսուչ, խորհրդի նախագահ), ընդմիջտ թողնելով Էջմիածինը, մեկնում Թիֆլիս:

Դարձյալ Թիֆլիսում: Աբեղյանը Ներսիսյան դպրոցի տեսչության հրավերով ստանձնում է դպրոցի գրաբարի և հայ հին գրականության ուսուցչի պաշտոնը: Մինչև նոր ուսումնական տարեսկիզբն սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը:

Եվ պատահական չէ, որ պատերազմի բերած արհավիրքներից անկախ, հենց պատերազմի տարիներին, Թիֆլիսում հայ առաջավոր մտավորականության ջանքերով նոր թափ ու ծավալ է ստանում հայ մշակութային կյանքի զարգացումը:

Ահա, ազգային-քաղաքական և մշակութային կյանքի այս հորձանուտն է նետվում Մանուկ Աբեղյանը:

Նա, հիշյալ տասնամյակում, ի թիվս հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչների, ընդգրկվում է Թիֆլիսում հիմնադրված Հայ գրողների կովկասյան և Հայոց ազգագրական ընկերությունների մեջ՝ իր գործուն մասնակցությունը ցուցաբերելով դրանց աշխատանքներին: 1916-ի սկիզբներից նա գիտական մի շարք զեկուցումներով հանդես է գալիս հիշյալ ընկերությունների նիստերում՝ արժանանալով ջերմ ընդունելության:

Հունվարի 16-ին, Հայոց ազգագրական ընկերության հրապարակային նիստում, Աբեղյանը զեկուցում է կարդում՝ նվիրված ընկերության նախկին անդամ, նշանավոր հայագետ Կարապետ եպս. Տեր-Մկրչյանի կյանքին ու գիտական գործունեությանը: Դարձյալ Հայոց ազգագրական ընկերության հրավերով 1916-ի մարտի 9-ին, ընկերության աշխատակիցների նեղ շրջանում, ապա՝ ապրիլի 6-ին ընկերության հրապարակային նիստում Աբեղյանը կարդում է Գրիգոր Նարեկացուն նվիրված իր նշանավոր դասախոսությունը («Սուրբ Գրիգոր Նարեկացի»), որ տպագրվում է նույն տարվա «Ազգագրական հանդես»-ի XXVI գրքում:

Մինչև այդ, հոկտեմբեր ամսին, նույն գրողների ընկերության հրապարակային նիստերից մեկում, Աբեղյանը դասախոսում է հայոց հին քանաստեղծության մասին:

Մեծ արձագանք է ունենում այս դասախոսությունը: Ահա, թե ինչպես է արձագանքում Հովհ. Թումանյանը. «Միայն Վ. Բրյուսովից հետո է, որ մեր հին քանաստեղծության մասին լսում ենք պ. Մ. Աբեղյանից, որը տասնյակ տարիներ ուսումնասիրել է մեր հին գեղեցիկ գրականությունը, դեպի որը մենք շատ անտարբեր ենք»³: Աբեղյանի այդ զեկուցումը Հովհ. Թումանյանի անմիջական հանձնարարությամբ (1917-ին) տպագրվում է առանձին գրքով:

1916 թ. դեկտեմբերին Բաքվի Հայ գրասերների ընկերությունը Մ. Աբեղյանին հրավիրում է Բաքու: Դեկտեմբերի 22-ին Բաքվի մարդասի-

³ Տե՛ս Մ. Հ ա ղ ո յ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 91:

րական ընկերության դահլիճում նա կրկնում է Թիֆլիսում կարդացած դասախոսությունը:

Արեղյանի հայ հին գրականությանը նվիրված դասախոսությունները շարունակվում են հաջորդ տարի ևս: 1917-ի հունվարի 27-ին, դարձյալ Թիֆլիսի Հայ երաժշտական ընկերության դահլիճում, նա կարդում է հայ միջնադարյան առակներին նվիրված իր նոր հետազոտությունը: Գոշի և Այգեկցու առակների ընձեռած նյութի հիման վրա, Արեղյանը բացահայտում է առակների ժանրի մեջ անդրադարձած միջնադարյան Հայաստանի սոցիալ-դասակարգային կյանքի պատկերը:

1917-ի ապրիլին, Հայոց ազգագրական ընկերությունը Թիֆլիսում հիմնում է կովկասագիտական և, մասնավորապես, հայագիտական երկսեռ բարձրագույն դասընթացներ, որի համար դասախոս է կարգվում Մ. Արեղյանը: Նույն տարվա մայիսի 13-ին նա կարդում է իր առաջին դասախոսությունը՝ նվիրված հայ հին ժողովրդական բանահյուսությանը, մասնավորապես հին վեպի զարգացման ու հարատևության հարցին:

1917-ի Փետրվարյան հեղափոխությունը մեծ խանդավառությամբ է ընդունվում ցարական ինքնակալության տակ ճնշվող Անդրկովկասի ժողովուրդների կողմից: Թիֆլիսում ու զավառներում, չնայած պատերազմական ծանր պայմաններին, հեղափոխության ընձեռած դեմոկրատական արտոնությունների շնորհիվ հիմնվում են հայ ազգային մի շարք կրթական ու մշակութային հաստատություններ: Դրանցից էր Թիֆլիսում Հայկական պետական գիմնազիայի հիմնադրումը: Արեղյանը, որ դասավանդում էր Ներսիսյան դպրոցում, դառնում է գիմնազիայի բարձր դասարանների հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

1918-ին Թիֆլիսի Հայ փաստաբանների միությունը (Հայփաստ) նախաձեռնում է շուտափույթ կազմել ու հրատարակել իրավաբանական տերմինների մի առանձին բառարան: Բառարանը կազմելու և խմբագրելու աշխատանքների մեջ են ներգրավվում մի խումբ հմուտ իրավագետների հետ միասին նաև Մ. Արեղյանին ու Ստ. Մալխասյանցին: 1919-ին լույս է տեսնում բառարանը («Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան»), որն իր տեսակի մեջ առաջինը լինելով, մեծապես նպաստում է հայ իրավաբանական լեզվի հետագա զարգացմանը: Մեկ տարի անց Արեղյանին հրավիրում են աշխատելու Հայաստանի արդարադատության նախարարությունում՝ հայ իրավաբանական լեզուն հարստացնելու հատուկ նպատակով: Այստեղ էլ նրա իսկ ջանքերով՝ հիշյալ բառարանի բազմաթիվ տերմիններ ու բառեր, ինչպես նաև իր կողմից կազմված իրավաբանական մի շարք նորակերտ բառեր սկսում են կիրառվել գործնականում և շուտով լայն տարածում են ձեռք բերում:

Նույն ժամանակներում Թիֆլիսի կանանց բժշկական դասընթացները վերածվում են Կովկասյան համալսարանի: Աբեղյանը հրավիրվում է նաև այդ նորաբաց համալսարան՝ պրիվատ-դոցենտի պաշտոնով, իբրև հայոց լեզվի և գրականության դասախոս: Այդ պաշտոնում նա մնում է երկու տարի՝ մինչև 1919 թվականը: Աբեղյանը, որ այդ տարիներին արդեն պատկառելի գիտնականի ու մանկավարժի հռչակ էր վայելում, տարբեր ուսումնական հաստատություններից աշխատանքի բազմաթիվ հրավերներ է ստանում:

Աբեղյանը Երևանում, վերջին հանգրվանում: 1918-ին Թիֆլիսում, սկիզբ է դրվում Երևանի համալսարանի կազմակերպման աշխատանքներին: Աբեղյանը կարգվում է կազմակերպիչ հանձնաժողովի անդամ և հաջորդ տարի հրավիրվում Երևան՝ նորաբաց համալսարանի գործերով զբաղվելու: 1919-ի օգոստոսի 1-ին նա կարգվում է Երևանի համալսարանի դասախոս և պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկան:

Մակայն Երևանում հարմար չենք չլինելու պատճառով, համալսարանի բացումը կատարվում է հաջորդ տարվա հունվարին՝ Ալեքսանդրապոլում: Աբեղյանը, որ 1919 թ. կեսերին ընտանիքով արդեն փոխադրվել էր Երևան, ընտանեկան որոշ հանգամանքների պատճառով չի կարողանում մեկնել Ալեքսանդրապոլ դասախոսելու: Նա վեց ամսով արձակուրդ է վերցնում և մեկնում Երևանից: 1920-ի հունիսին, արձակուրդից վերադառնալիս, Աբեղյանին առաջարկում են զինվորական ծառայողների ուսումնական դասընթացների վարիչի պաշտոնը: Նա ստանձնում է այդ պաշտոնը, որը շուտով դառնալու էր մի շատ կարևոր գործի սկիզբ:

Նույն տարվա հոկտեմբերին Հայաստանի ռազմական նախարարությունը, ի թիվս ռազմական գործի մասնագետների, Աբեղյանին հանձնարարում է կազմել հայերեն լեզվով ռազմական հրամաններ ու հրահանգներ: Աբեղյանը ձեռնամուխ է լինում պատմական այդ շատ կարևոր խնդրի՝ հայոց լեզվի ռազմական տերմինաշինության գործի իրականացմանը: Աշխատանքը տևում է մի քանի տարի:

Նոյեմբերին, երբ Հայաստանում հաստատվում են սովետական կարգեր, հաջորդ իսկ ամսին Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նուրիջանյանի հրամանով Աբեղյանին հանձնարարվում է կազմել ռուս-հայերեն և հայ-ռուսերեն ռազմական տերմինների բառարան: Այդ գործը գլուխ բերելու նպատակով Սովետական Հայաստանի ռազմական կոմիսարիատի գլխավոր շտաբում Աբեղյանը նշանակվում է ռազմական անձնական քարտուղար: Նա, որ մինչև այդ ռազմական հրամանները, հրահանգներն ու կանոնադրքերը ռուսերենից հայերեն թարգմանող հանձնախմբի անդամ էր և վարել էր մեկուկես տասնյակի հասնող ռազմական գրքերի ու զինվորական գործավարության խմբագրություն:

նր, վստահորեն ձեռնամուխ է լինում ռազմական տերմինների բառարանը կազմելու աշխատանքներին:

Արեղյանի գիտա-հասարակական գործունեությունը նոր թափ ու ծավալ է ստանում Հայաստանի սովետականացման շրջանում:

Դրան կից առաջնահերթն ու անհետաձգելի անգրագիտության վերացումն էր՝ կուլտուրական հեղափոխության ծրագրի կենտրոնական հարցը, որի կենսագործման համար Հայաստանի կառավարությունը հարմար ձևեր է որոնում: Հայոց լեզուն, չնայած իր նոր բնույթին, դեռևս շարունակում էր օգտվել հին հայերենի՝ գրաբարի ուղղագրությունից և ենթարկվում ուղղագրական հին կանոններին ու օրենքներին: Այդ հանգամանքը զգալիորեն դժվարացրել էր հայոց լեզվի ուսուցումը: Վերջինս լուրջ խոչընդոտ էր մասսայական անգրագիտությունը կարճ ժամանակում արմատախիլ անելու, և, բնականաբար, առաջին հերթին ձեռնամուխ են լինում ուղղագրության բարեփոխության կարևոր խնդրին:

Արեղյանն ապացուցում է, որ այն պատմական մի անխուսափելի անհրաժեշտություն է, «իսկապես շարունակությունն ու մնացորդը» «գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի, որ դեռ վերջնական բավարար լուծում չի ստացել մտքերի մեջ ընդհանրապես»:

Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը ուղղագրության բարեփոխման գործը հանձնարարում է այդ խնդրի հնօրյա նախանձախնդրին՝ Մանուկ Արեղյանին:

1921-ի հունվարին Հայաստանի լուսժողովում Աշ. Հովհաննիսյանի հրավերով Երևանի պետական թատրոնի դահլիճում՝ բազմամարդ լսարանի առաջ, Արեղյանը կարդում է հայոց լեզվի ուղղագրության հնարավոր բարեփոխումների մասին մի զեկուցում, որ փաստորեն շարունակությունն ու զարգացումն էր 1913-ին Էջմիածնում կարդացած հայտնի զեկուցման հիմնական դրույթների:

Եվ այդ կապակցությամբ նա իր զեկուցման մեջ երեք հիմնական կետերով որոշակի ուրվագծում է բարեփոխումների աստիճանները: Այդ բարեփոխությունները նա առաջարկում էր կատարել աստիճանաբար և մի քանի տասնամյակների ընթացքում:

Արեղյանի հիշյալ առաջարկությունը լուսժողովի կողմից զանց է առնվում և մեր ուղղագրության բարեփոխումը գործադրվում է միանգամից: Այդ պարագան չէր կարող հուզումներ չառաջացնել գրագետ հին սերնդի, մասնավորապես, մտավորական բարձր խավի մեջ:

Ուղղագրական դեկրետից հետո լույս է տեսնում Արեղյանի «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» գրքուկը, այն մեր երկրում և արտասահմանի հայ գաղութներում դառնում է հատուկ քննության առարկա: 1924-ին Թիֆլիսի «Մարտակոչ» թերթում լույս է տեսնում Ստ. Մալխասյանցի հոդվածը՝ Արեղյանի «Առաջնորդի...»-ի առթիվ, ուր

«գործնական տեսակետից» քննադատվում է նոր ուղղագրությունը: Դրա դեմ Աբեղյանը հանդես է գալիս մի առանձին գրքով, մի առ մի հիմնավորում ու պաշտպանում ուղղագրական բոլոր բարեփոխությունները, գործնական ու գիտական տեսակետից հերքում Մալխասյանցի բոլոր առարկությունները: Հիշյալ աշխատությունը Աբեղյանի նոր ուղղագրության գրեթե բոլոր դրույթների խոր ու մանրամասն գիտական հիմնավորումն է:

Աբեղյանը դառնում է հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրը, և 1940-ին որոշ չափով բարելավված ուղղագրությունը, որ գործում է այժմ մեզանում, այլ բան չէ, քան 1921-ին Աբեղյանի առաջարկած երկրորդ, մասամբ և երրորդ աստիճանի ուղղագրական փոփոխությունների իրագործումը:

1921-ին Հայաստանի աշխատավորության ֆիզիկական ծանր կացությունը բարվոքելու անհրաժեշտությունից մղված, Երևանում կազմակերպվում է Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): Աբեղյանը ևս, բազմաթիվ հայ գործիչների ու մտավորականների հետ միասին ընտրվում է կոմիտեի անդամ և իր գործուն մասնակցությամբ նպաստում նրա հայրենանվեր մեծ նպատակի իրագործմանը:

Հայաստանի սովետականացման առաջին իսկ ամսին փակվում է Երևանի համալսարանը և կառավարության հատուկ որոշումով բացվում է ժողովրդական համալսարան, ուր Աբեղյանին հանձնարարվում է դասախոսել հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն և հայոց լեզվի տեսություն առարկաները: Եվ, այնուհետև, մեկ տասնամյակից ավել Աբեղյանը շարունակում է հիշյալ առարկաների դասավանդումը Երևանի համալսարանում:

Այդ գիտա-մանկավարժական աշխատանքների ընթացքում Աբեղյանին շնորհվում է դոցենտի (1921 թ.), ապա՝ հայ գրականության պատմության պրոֆեսորի (1926 թ.) կոչում:

1923–1925 թթ. Աբեղյանը վարում է Երևանի արդեն պետական համալսարանի պատմա-գրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

1925-ի հունվարի 20-ին, Հայաստանի Ժողովրդի հատուկ դեկրետով, հիմնադրվում է Սովետական Հայաստանի առաջին գիտական կենտրոնը՝ գիտության և արվեստի ինստիտուտը: Վերջինս «բարձրագույն գիտա-հետազոտական հիմնարկություն էր»: 1925-ի ապրիլի 27-ին հրավիրվում է ինստիտուտի առաջին ընդհանուր ժողովը և տեղի է ունենում ինստիտուտի բացումը: Խորհրդի նախագահ է ընտրվում Հայկ Գյուլիքեվիսյանը, փոխնախագահ՝ Մ. Աբեղյանը և գիտական քարտուղար Հովակիմ Բարսեղյանը: Նույն տարվա հոկտեմբերի 11-ին՝ ինստիտուտի ընդհանուր ժողովի երկրորդ նիստում, Հ. Գյուլիքեվիսյանը հրաժարվում է նախագահությունից, և ժողովը միաձայն խորհրդի նախագահ է ընտրում Մ. Աբեղյանին: 1925 թվականից մինչև

1930 թվականն անընդմեջ Աբեղյանը վերընտրվում է ինստիտուտի խորհրդի նախագահի պաշտոնում և այդ հինգ տարիների ընթացքում պատվով կատարում իր վրա դրված դժվարին ու պատասխանատու պարտականությունը: Ահա թե ինչ է գրում Աբեղյանի մասին իր հուշ-ե-լույթներից մեկում ինստիտուտի այդ տարիների արվեստի բաժնի գիտական քարտուղար, հետագայում ակադեմիկոս Դերենիկ Դեմիրճյանը. «Մանուկ Աբեղյանը... պրիզիդենտ էր... նրան էինք հաշվետվություն ներկայացնում մեր բաժինների գործունեության մասին: Խստապահանջ էր երկաթի պես, կորեկտ, ջանադիր, բարեխիղճ ու գործունյա: Մենք հոգնում էինք, նա՝ ոչ: Նա աշխատում էր հանգիստ, հաստատ և հիմնավորապես: Նա ուսուցանում էր աշխատել, ներշնչում էր հարգանք ու ակնածանք դեպի գիտական ճշտությունը, գործի կատարման ստուգումը. ուսուցանում էր սիստեմ, մեթոդ, սեր դեպի գիտական աշխատանքն ու գիտությունը»⁴:

Աբեղյանի հմուտ ղեկավարության ներքո գիտության և արվեստի ինստիտուտն սկսում է գիտական ու մշակութային լայն գործունեություն ծավալել:

Ինստիտուտի ամենամյա «Տեղեկագրի» էջերում, ինչպես նաև առանձին հրատարակություններով տպագրվում են Հայաստանի գիտական մտքի նոր նվաճումները: Ինքը՝ Աբեղյանը, ինստիտուտում ու պետական համալսարանում պաշտոններով ծանրաբեռնվելուց անկախ, շարունակում է տրանսլանցիոն գիտական գործունեություն, որի լավագույն արգասիքներից մի քանիսը արդյունք են այդ ժամանակահատվածի: Դրանցից են հատկապես «Հայոց լեզվի տեսություն» գրքի վերամշակումը, (տպագրված 1931 թ.), և մանավանդ «Հին գուսանական ժողովրդական երգեր» մենագրական հետազոտությունը (տպագրված Պետհամալսարանի գիտական «Տեղեկագրի» էջերում, 1927-ին, առանձնատիպը՝ 1931-ին):

Աբեղյանի նկատմամբ Սովետական Հայաստանի կառավարության ու կուսակցության վերադաս մարմինների ունեցած հարգանքն ու վստահությունը դրսևորվում է հատկապես հիշյալ տարիներին նրա՝ հանրապետական ու անդրկովկասյան սովետական իշխանությունների ղեկավար կազմում ընտրվելու մեջ:

1925-ին նա ընտրվում է Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեի անդամ և հետագա տարիներին, (1927, 1929 թթ.) դարձյալ վերընտրվում: 1929-ին Աբեղյանն ընտրվում է Անդրկովկասի Կենտգործ-

⁴ Դ. Դեմիրճյան. Հուշ-ելույթ Մ. Աբեղյանի մահվան տասնամյակին նվիրված երեկոյին, Հայաստանի ԳԱ նիստերի դահլիճում, 1954 թ. սեպտ. 30-ին. տե՛ս Մ. Հ ա ր Ի թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 122:

կումի անդամ, իսկ դրանից առաջ՝ 1927-ին, Երևանի քաղաքային խորհրդի անդամ:

Մակայն 1930-ական թվականներից սկսած, անձի պաշտամունքի սկզբնաշրջանից ի վեր փոխվում է վերաբերմունքը հին մտավորականության նկատմամբ: Ասպարեզ են գալիս ժամանակի ուղեկիցները՝ իրենց ամբոխավարական «քննադատություններով»՝ հասնելով ընդհուպ քաղաքական շանտաժի:

1930-ին Արեւիյանն անակնկալ, առանց որևէ պատճառի, ազատվում է գիտության և արվեստի ինստիտուտի նախագահի պարտականություններից: Մակայն Սովետական Հայաստանի կուսակցությունն ու կառավարությունը մինչև վերջ էլ խորին պատկառանքով ու հոգատարությամբ են վերաբերվում Արեւիյանին՝ միշտ պատշաճը հատուցելով նրա մեծ վաստակի դիմաց:

Ազատվելով գիտության և արվեստի ինստիտուտի ղեկավարի պաշտոնից՝ Արեւիյանը հաստատվում է վերանվանված կուլտուրայի պատմության, և ապա պատմության ու գրականության ինստիտուտների նախագահության անդամ:

1932-ին նա ընտրվում է Հայաստանի Կենտգործկումի նախագահությանն առընթեր կազմված, Հայաստանի ԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման և ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովը զգալի գործ է կատարում Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող օտար տեղանունները հայացնելու, ինչպես նաև եղածները ճշգրտելու ուղղությամբ:

Սովետական Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով հայ գիտությանն ու մշակույթին մատուցած Արեւիյանի մեծ ու բազմամյա ծառայությունները, 1935-ին նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ նույն տարվա նոյեմբերի 20-ին, առանց դիսերտացիայի պաշտպանության, եղած գիտական աշխատությունների հիման վրա, Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը նրան շնորհում է հասարակական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Եվ նա, չնայած իր պատկառելի տարիքին ու աննպաստ առողջությանը, ձեռնամուխ է լինում գիտական նորանոր խնդիրների լուծմանը:

1931-ին աչքերի հիվանդության պատճառով Արեւիյանը հրաժարվում է Երևանի պետական համալսարանում դասավանդելուց, անցնում է կենսաթոշակի, և ընդմիշտ վերջ դնում իր բազմամյա մանկավարժական գործունեությանը: Բայց նա չի թողնում գիտության ասպարեզը և շարունակում է աշխատանքները գիտա-հետազոտական հաստատություններում: Այդ տարիներին իր ամբողջ ուժն ու եռանդը կենտրոնացնում է կիսատ մնացած աշխատությունների ավարտման, վերամշակման և տպագրության վրա:

1933-ին Աբեղյանը Մելքոնյան ֆոնդի միջոցով լույս է ընծայում «Հայրոց լեզվի տաղաչափություն» հետազոտությունը, որ թեպետ պատարաստ էր երկու տասնամյակ առաջ, սակայն ժամանակի ընթացքում նորանոր փաստերով համալրվել ու վերամշակվել էր հեղինակի կողմից և դարձել դասական մի գործ:

Աբեղյանի 30-ական թվականների գիտա-հետազոտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովրդական վեպը՝ «Սասնա ծռեր»-ը:

1931-ի կեսերին պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ե. Չարենցի և Մ. Աբեղյանի միջև բանակցություններ են վարվում «Սասնա ծռեր»-ի գիտական հրատարակության շուրջ: Նախաձեռնությունը, որ պատկանում էր բանաստեղծին, շատ է դուր գալիս Աբեղյանին, բայց գործի ծանրությունը և մանավանդ աչքերի հիվանդությունը նկատի ունենալով, վերջինս հրաժարվում է վեպի ընդհանուր խմբագրությունը հանձն առնել: Սակայն Չարենցի կողմից առաջարկությունը կրկնվում է: Այս անգամ Աբեղյանը պայմանավորվելով Կ. Մելիք-Օհանջանյանի հետ, և ստանալով նրա համատեղ աշխատելու համաձայնությունը՝ ընդունում է պետհրատի առաջարկը: 1932-ի սեպտեմբերին, Աբեղյանի ու Չարենցի միջև կնքվում է պայմանագիր: Կազմողներն անմիջապես ձեռնամուխ են լինում գործին: Կ. Մելիք-Օհանջանյանի եռանդուն ջանքերի շնորհիվ հնադարաններից հանվում ու ի մի են բերվում վեպի անտիպ ու տպագիր տարբերակները:

«Սասնա ծռեր»-ի առաջին հատորը լույս է տեսնում 1936-ին, մի գործ, որը մեր դարավոր մշակույթի լավագույն հուշարձաններից է:

1938-ի սեպտեմբերի 7-ին, Հայաստանի կոմկուսի Կենտկոմը որոշում է 1939-ի մայիս ամսին տոնել «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանը: Հայաստանի ժողկոմխորհուրդը կազմակերպում է վեպի տոնակատարությունն անցկացնող հոբելյանական հանրապետական կոմիտե, որի մեջ մտնում է Մ. Աբեղյանը: Կոմիտեի առաջին իսկ նիստում Մ. Աբեղյանի առաջարկությամբ որոշվում է կազմել «Սասունցի Դավիթ» գիտական համահավաք հյուսվածո բնագիրը և հոբելյանի օրերին հրատարակել հայերեն և ռուսերեն լեզուներով: Կազմվում է բնագիրը կազմող հանձնաժողով՝ Գ. Աբովի նախագահությամբ, Մ. Աբեղյանի և Ա. Ղանալանյանի անդամակցությամբ:

Հանձնաժողովն անցնում է համահավաք բնագիրը կազմելու աշխատանքներին: 1939-ի հոբելյանական օրերին լույս է տեսնում «Սասունցի Դավիթ» համահավաք բնագիրը: Եվ այդ օրից սկսած՝ մեր ժողովրդական վեպը թե՛ հայերիս և թե՛ օտարներին ներկայանում է հիշյալ հյուսվածո բնագրով: Վեպի համահավաք բնագիրը միննույն տարում թարգմանվում է ռուսերեն և ունենում երեք տարբեր հրատարակություններ. մեկը՝ Երևանում, մյուսը՝ Մոսկվայում, երրորդը՝ Լենինգրադում:

Վեպի համահավաք բնագրի հրատարակությամբ, փաստորեն, մեր վեպը դուրս է գալիս նախ՝ համազգային և ապա՝ միջազգային ասպարեզ:

Բացի համահավաք բնագրից, Աբեղյանը գործուն մասնակցություն է ունենում վեպի Տոնակատարության գիտական հանդեսներին: 1939-ի օգոստոսի 22-ին, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Մասունցի Դավիթ» նվիրված հորեյանական նստաշրջանում, նա կարդում է մի զեկուցում, որն ամբողջությամբ նվիրված էր հայ բանագիտության մեջ մեր վեպի գրառման, հրատարակման ու ուսումնասիրման քննական պատմությանը:

Աբեղյանի հիշյալ զեկուցումը լույս է տեսնում հայերեն և ռուսերեն՝ «Մատենագիտություն «Մասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» վերնագրով:

Սովետական Հայաստանի կառավարությունն այս անգամ ևս բարձր է գնահատում մեծ գիտնականի վաստակը՝ հատկապես վեպի համահավաքը կազմելու համար, և Աբեղյանին (ինչպես նաև Գ. Արքովին և Ա. Ղանալանյանին) 1940 թ. պարգևատրում է հանրապետության Գերագույն սովետի նախագահության պատվոգրով:

Բազմակա գիտական ու մանկավարժական ծանր աշխատանքն իր խոր հետքն է թողնում արդեն իր պատկառելի հասակն ապրող գիտնականի առողջության վրա:

Կրկին համալսարան վերադառնալու ռեկտորի արած քանիցս առաջարկները մերժվում են: Բժիշկները հորդորում էին հրաժարվել նաև պարապմունքներից, սակայն Աբեղյանը կտրականապես մերժում է: Նա վերջնականապես կարգի է բերում քառասուն տարի առաջ Կոմիտասի հետ ձեռնարկած ու կիսատ թողած և այնուհետև սոսկ իր ջանքերով գլուխ բերած հայ ժողովրդական գեղջկական բանահյուսության գեղեցիկ նմուշների՝ երգ-խաղիկների համահավաք մեծ ժողովածուն, որն այնքան ջանք ու տնական «սև» աշխատանք էր պահանջել գիտնականից: Եվ 40-ական թվականները սկզբնավորվում են «Ժողովրդական խաղիկներ» մեծածավալ հավաքածուի հրատարակումով: Տասնյակ տարիների աշխատանք էր այն իր մեջ ամփոփում, որի համար էլ շատ սիրելի էր դարձել մեծ գիտնականին: Նույն թվականին էլ Աբեղյանը լույս է ընծայում միջնադարյան քաղաքային քնարական երգերի գողտրիկ ժողովածուն: Այն, նույնպես, երկար տարիների մանրագնի պրպտումների արգասիք էր, որի տեսական-բանասիրական ուսումնասիրությունը լույս էր տեսել տակավին 20-ական թվականների վերջերին՝ «Հին գուսանական ժողովրդական երգեր» խորագրով:

Բանագիտական-բանասիրական վերջին աշխատանքները, որոնք լույս են տեսնում 1940-41 թթ.՝ «Վիպական երգեր» և «Վիշապներ» կոչ-

ված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ հետազոտություններն են:

40-ական թվականներին Աբեղյանի հիմնական գրադմունքն է դառնում մեր հին ու միջնադարյան գրականությունը՝ թե՛ առանձին դեմքերով ու խնդիրներով, թե՛ այն ամբողջությամբ վերցրած:

Հայոց հին գրականությանը նվիրված մեծարժեք ուսումնասիրությունները և մանավանդ «Հայոց հին գրականության պատմություն»-ը դառնում են մեծ գիտնականի կարապի երգը:

1940-ի գարնանը, չնայած անբարեհույս առողջությանը, Աբեղյանը Մեսրոպ Մաշտոցի մահվան 1500-ամյակի առիթով ձեռնամուխ է լինում մեր դպրության մեծ հիմնադրի կյանքն ու գործը պատկերող Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի գիտական հրատարակությանը: Հաջորդ իսկ տարում՝ 1941-ին, լույս է տեսնում Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն՝ Աբեղյանի կազմած բնագրով, թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: Նույն տարվա սկզբին «Սովետական գրականություն» ամսագրում տպագրվում է Աբեղյանի «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» մեծարժեք հետազոտությունը, որը հետագայում (1962 թ.) դրվեց Կորյունի երկի աշխարհաբար հրատարակության ներածականում:

1940-ին դարձյալ ՍՍՏՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտը, որի գիտական խորհրդի անդամ էր Աբեղյանը, հանձնարարում է վերջինիս գրելու հայ հին գրականության ամբողջական պատմությունը: Աբեղյանը երկար ժամանակ տատանվում է ձեռնարկել այդ պատասխանատու և ծանր գործը, ակամա համաձայնվելուց հետո, հրաժարվում է, և ինստիտուտին է վերադարձնում պայմանագիրն ու դրա դիմաց ստացած գումարը: Պատճառը՝ օրավուր վատթարացող առողջությունն էր, մյուս կողմից՝ հայ ժողովրդի գիտական մշակված պատմության բացակայությունը, ինչը շատ էր ծանրացնելու գրականության պատմաբանի գործը: Սակայն ինստիտուտի բազմիցս կրկնվող դիմումների ու հորդորների ճնշման ներքո, ի վերջո, Աբեղյանը հանձն է առնում այդ գործը և երկու տարվա ընթացքում ավարտում «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը, որն ընդգրկում էր սկզբից մինչև X դարի մեր բանահյուսության ու գրավոր դպրության ամբողջական պատկերը՝ իր զարգացման օրինաչափություններով:

Առաջին հատորն ավարտելուց հետո Աբեղյանը նույն թափով ու ծրագրով շարունակում է աշխատանքները երկրորդ գրքի վրա՝ մեր հին գրականության պատմության մշակումը հասցնելով մինչև XIV դար:

«Հայոց հին գրականության պատմություն»-ը շարադրելու ընթացքում Աբեղյանը հանդես է գալիս հին գրականության հանգուցային

խնդիրներին նվիրված մեծարժեք հոդվածներով ու զեկուցումներով: Դրանցից հիշարժան են հատկապես երկուսը. «Գյանքի և աշխարհայացքի փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայոց հին գրականության վերածնության շրջանի», (կարդացված ՄՍՌՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի նիստերի դահլիճում, 1943-ի հունվարի 18-ին, տպագրված Արմֆանի նույն տարվա «Տեղեկագիր» առաջին համարում), և ապա՝ «Հովհաննես Մարկավազ վարդապետ» գլուխը (ՀՄՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 1–2):

Չնայած իր պատկառելի տարիքին, ինչպես միշտ, կյանքի այս շրջանում ևս Աբեղյանը բանիվ և գրչիվ արձագանքում է ժամանակի հուզող իրադարձություններին:

1941-ի մայիսին, աշխարհացունց պատերազմից մեկ ամիս առաջ, Մոսկվայում տեղի է ունենում հայ գրականության տասնօրյակը: Աբեղյանը հատկապես ընդգծում է տասնօրյակի վիթխարի նշանակությունը հայ ժողովրդի համար, որի մշակույթն անցյալի դաժան պայմաններում չի ոչնչացել, այլ վերհասնել է առասպելական փյունիկի նման:

1941-ի հունիսին, երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Աբեղյանն իր ծանրակշիռ խոսքն է ուղղում բոլոր գիտնականներին. «Անենք ամեն բան, ինչ որ կարող ենք մեր բազմամիլիոն ժողովուրդների հետ, ավելի ամրացնենք թիկունքը և հաղթությունը մերը կլինի, – այդ մասին ոչ մի կասկած չկա, – անքննորից կդառնանք մեր խաղաղ շինարարական աշխատանքին»⁵:

Մա, 80-ին մոտեցող պատկառելի գիտնականի հավատամքն էր, տոգորված կամքի կորովով ու հաղթանակի խոր հավատով:

Գյանքի վերջին չորս տարիները տառացիորեն դառնում են մեծ գիտնականի հասարակական վերագնահատման ու մեծարման մի կարճ, բայց բովանդակալից ժամանակաշրջան: Հենց 40-ական թվականներից, տարբեր ուսումնական ու գիտահետազոտական հաստատություններից սկիզբ են առնում արդեն պատկառելի տարիքով գիտնականին զանազան եղանակներով իրենց աշխատանքների մեջ ներգրավելու տարբեր առաջարկները:

1943-ի ապրիլին, գրականության և լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն Աբեղյանի թեկնածությունն է առաջադրում ՄՍՌՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ ընտրվելու համար: Ապրիլի 27-ին Երևանի պետհամալսարանի գիտական խորհուրդը ևս ՄՍՌՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի բարձր կոչման է առաջադրում Մանուկ Աբեղյանին: Իսկ 1944-ի սկզբներին, երբ Աբեղյանն արդեն Հայաստանի անդրանիկ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, ակադեմիայի նախագահ Հովսեփ Օրբելու ցանկությամբ առաջարկվում է նրան՝ ստանձնել ակադեմիայի գրականության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը: Աբեղյանը մեծահոգաբար մերժում է իրեն ուղղած այդ պատվավոր առաջարկությունը՝ պատճառաբանելով իր անբավարար ուժերն ու ժամանակի սղությունը. «Եթե կարողանայի, – գրում է նա, – չէի հրաժարվի»:

1943 թ. նոյեմբերին, Հայաստանի սովետականացման 23-րդ տարելիցի առթիվ, միութենական կառավարության հանձնարարությամբ և Հայաստանի

⁵ «Գրական թերթ», 1941, №21:

Ժողկոմսովետի որոշումով հիմնադրվում է Հայաստանի անդրանիկ գիտությունների ակադեմիան, որը հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչների տարիների փայփայած երազանքի իրականացումն էր:

1943-ի նոյեմբերի 29-ին բացվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստը, ուր ակադեմիկոսներ Հ. Օրբելու, Բ. Գրեկովի և ուրիշների հետ միասին ընդարձակ ճառով հանդես է գալիս նաև ակադեմիկոս Մ. Արեղյանը: Այդ ճառը Հայաստանի գիտությունների ակադեմիայի զարգացման հետագա ուղղությունը ընդհանուր գծերով նշող մի ծրագիր էր, որն իր նշանակությունը մինչև օրս էլ չի կորցրել:

Այսպես, մահվանից մեկ տարի առաջ, Սովետական Հայաստանի գիտական անդրանիկ կենտրոնի՝ գիտության և արվեստի ինստիտուտի երբեմնի նախագահ Մանուկ Արեղյանը, Հայկական ակադեմիայի հիմնադրմանը նվիրված իր պատմական ելույթում առաջադրում է տեսական և գործնական մի շարք ծրագրային խնդիրներ, որոնք բնորոշելու էին Հայաստանի գիտության վաղվա օրը:

Ակադեմիկոս դառնալուց հետո Արեղյանը շարունակում է աշխատել «Հայտնի գրականության պատմության» երկրորդ հատորի վրա: Մակայն պատերազմական ծանր օրերը, ռազմաճակատում անհայտ կորած որդու վիշտը, օրըստօրե վատթարացող առողջությունը աստիճանաբար թեքում են «գիտության դարավոր կաղնուն» դեպի գետին և 1944 թ. սեպտեմբերի լույս 25-ի գիշերը ընդմիջտ տապալում: «Նա ընկավ հսկա կաղնու նման, և ծանր լուրջուն տիրեց անտառում», – գրեց Արեղյանի մահվան մասին հետագայում Դերենիկ Դեմիրճյանը: Արեղյանի մահը ծանր վիշտ է պատճառում հայ գիտության ու մշակույթի մեծ երախտավորներին՝ նրա ընկերներին ու բարեկամներին:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին այդ առթիվ հեռագրում է Լենինգրադից. «Խորին կսկիծով ընկալեցինք հայ գիտության և հայ ժողովրդի կրած ահռելի կորստի՝ մեծապատիվ Մանուկ Արեղյանի մահվան գույժը»⁶:

Ավ. Իսահանյանը մեկ տարի անց, Արեղյանի գերեզմանին մահվան տարելիցի առնչությամբ, արտասանում է հետևյալ խոսքերը. «Մանուկ Արեղյան: Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական բառի ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար... Հավերժ սիրելի Մանուկ Արեղյան... Մենք խորապես զգում ենք, որ քո շնորհիվ մեր ազգային-հոգեկան միջավայրը լցված է իմաստությամբ և հեղինակությամբ, լրջությամբ և վեհ նպատակների հետապնդումով»⁷:

Արեղյանի հուղարկավորությունը կատարվում է հոկտեմբերի 1-ին, գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճից, ուր դրված էր նրա աճյունը՝ վերջին հրաժեշտի համար: Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ Արեղյանին թաղում են Երևանի քաղաքային պանթեոնում:

Մեծ գիտնականի հիշատակը հավերժացնելու համար, Հայաստանի ժողկոմսովետը որոշում է ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը և Երևանի - 36 միջնակարգ դպրոցը կոչել Մանուկ Արեղյանի անունով: Ապա, սահմանվում է Արեղյանի անվան վեց կրթաթոշակ՝ Երևանի

⁶ ԳԱԹ, Մ. Արեղյանի ֆոնդ, - 268:

⁷ «Գրական թերթ», 1959, - 40:

պետական համալսարանում, մանկավարժական ինստիտուտում և ակադեմիայի գրականության ինստիտուտում:

Մինևույն ժամանակ ժողովուրդները որոշում է նախապատրաստել և հրատարակել Աբեղյանի գիտական աշխատությունները, որին Մ. Աբեղյանի գրականության ինստիտուտը ձեռնամուխ է լինում անցյալ դարի 60-ական թվականներին:

Այսպիսով, նոր հայագիտական և մասնավորապես բանասիրական միտքը սկիզբ է առնում հիմնականում XIX դարի վերջերին և կապվում Մանուկ Աբեղյանի անվան հետ: Մ. Աբեղյանը հիմնովին հետազոտության է ենթարկել հայագիտության չորս գլխավոր բնագավառ՝ ա. Հայ ժողովրդական բանահյուսություն, բ. Հայ հին ու նոր գրականության պատմություն, գ. Հայոց լեզվի քերականություն և դ. Հայոց լեզվի տաղաչափություն՝ ամենուրեք ստեղծելով գիտական նոր համակարգ և ուսմունք, որոնք նոր խոսք են հայագիտության պատմության մեջ:

